ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2016թ. դեկտեմբերի 7-ի Թիվ N 1/886Ա որոշմամբ 2016թ. դեկտեմբերի 8-ին գրանցվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի Ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2018թ. փետրվարի 23-ի Թիվ N 1/124Ա որոշմամբ:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի Ծրագրային ազդագրի լրացումը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2018թ. հոկտեմբերի 10-ի Թիվ N 1/696Ա որոշմամբ:

Ներդրողները պարտատոմսերի Ծրագրային ազդագրի տպագիր տարբերակը կարող են ձեռք բերել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակում (հասցե՝ ՀՀ, 0010 Երևան, Վարդանանց 13):

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացվելու և հրապարակվելու են յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առնվազն երկու օր առաջ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտերը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է իրականացվի թողարկման նպատակով Բանկում բացված տարանցիկ հաշվեհամարին՝ մինչև պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտի ներկայացման օրվա ժամը 16:30-ը:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

Պարտատոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի և բանկային հաշիվներ բացել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում: «ԱյԴի Բանկ»-ը հանդիսանում է հաշվի օպերատոր, հետևաբար՝բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց «ԱյԴի Բանկ»-ում, որոնք կբացվեն անվճար: